ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի սեպտեմբերի 25-29-ը
Աստանա (Ղազախստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Ավագ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Աստանա (Ղազախստանի Հանրապետություն)

4. Հրավիրող կողմը

Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) քարտուղարություն

5. Գործուղման նպատակը

«Բազմակողմ առևտրային համակարգի ապագայի վերաբերյալ Եվրասիական տեսակետներ. ԱՀԿ-ի անդամակցությունն ու ԱՀԿ կանոնների զարգացումը» խորագրով 7-րդ կլոր սեղանին, ինչպես նաև Ղազախստանի կառավարության և ԱՀԿ քարտուղարության կողմից կազմակերպված «Զարգացման նպատակով առևտրի և ներդրումների դյուրացմանն աջակցությունը - Եվրասիական տեսակետ» խորագրով բարձր մակարդակի համաժողովին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները

- Եվրասիական երկրները գլոբալ տնտեսությունում և բազմակողմանի առևտրային համակարգում: Եվրասիական երկրները գլոբալ տնտեսությունում, տարածաշրջանում ձևավորվող ապագա ուժերը: Մեկ գոտի մեկ ճանապարհ նախաձեռնությունը և դրա ներդրումը բազմակողմ առևտրի համակարգում:

- Եվրասիական երկրների ԱՀԿ-ին անդամակցության գնահատումը, արդյունքները, ազդեցությունը և նոր միտումները: Եվրասիական տնտեսական միության տարածաշրջանային ինտեգրացիա և Եվրասիական տնտեսական միության ինտեգրումը բազմակողմ առևտրային համակարգում: Առևտրի համաշխարհային կազմակեպությանը Եվրասիայի երկրների անդամակցության՝ մինչև այսօր գրանցված ձեռքբերումների և ներկայիս իրավիճակի մասին ընդհանուր տեղեկատվություն:
- ԱՀԿ-ի ներգրավվածությունը իրավաստեղծ գործընթացում:
- Առևտրի և ներդրումների կայուն զարգացման, մրցակցության, աճի և տնտեսական դիվերսիֆիկացիայի ընդլայնմանն ուղղված քաղաքական խնդիրները և Եվրասիական տարածաշրջանի հեռանկարները:
- Ներդրումային կարիքների և մարտահրավերների հետ կապված խնդիրների լուծման գործարար հեռանկարները:
- Տեղական և տարածաշրջանային մակարդակում ներդրումների, նորարարությունների, հաջողության պատմությունների և մարտահրավերների մասին փորձի փոխանակում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառմանը մասնակցում էին Առևտրի համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետության և հրավիրված այլ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ: «Բազմակողմ առևտրային համակարգի ապագայի վերաբերյալ Եվրասիական տեսակետներ. ԱՀԿ-ի անդամակցությունն ու ԱՀԿ կանոնների զարգացումը» խորագրով 7-րդ կլոր սեղանի բացման արարողությանը ելույթ ունեցավ դեսպան, Առևտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Ալան Վոլֆը: Ողջույնի խոսքով հանդես եկավ Ղազախստանի ազգային էկոնոմիկայի նախարար Տիմուր Սուլեյմենովը, ինչպես նաև ելույթ ունեցավ դեսպան, Չինաստանում ԱՀԿ ներկայացուցիչ Ժանգ Սիանգչենը: Բազմաթիվ ելույթներ եղան մասնակից երկրների ներկայացուցիչների կողմից՝ անդրադառնալով

բազմակողմ առևտրային համակարգի հեռանկարների հետ կապված մի շարք խնդիրների:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության ԱՀԿ անդամակցության փորձը և արդյունքները:

«Զարգացման նպատակով առևտրի և ներդրումների դյուրացմանն աջակցությունը - Եվրասիական տեսակետ» խորագրով բարձր մակարդակի համաժողովին ելույթ ունեցավ ԱՀԿ գլխավոր տնօրեն Ռոբերտո Ազեվեդոն, Ղազախստանի Հանրապետության վարչապետ Բախտաժ Սագիտայեվը և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանն իր ելույթում ներկայացրեց Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները, ՀՀ ներդրումային միջավայրը և գործարար հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում ստորագրվել է «Astana Statement» փաստաթուղթը:

Կոչ է արվել տարանցիկ առևտրի հարցում լիակատար ըմբռնում դրսևորել դեպի ծով ելք չունեցող անդամ պետությունների կարիքներին, ուստի և համապատասխան տարանցիկ հնարավորություններ տրամադրել միջազգային իրավունքի և գործելակերպի հիման վրա՝ հաշվի առնելով դեպի ծով ելք չունեցող երկրների տնտեսական զարգացումից բխող հետագա պահանջները:

9. Գործուղվողը

Ավագ Ավանեսյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

09.10.2018թ.